«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա - ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – Գրիգորյան Գեղամ

Ղեկավար - Փ/Գ-Տ Ա. Իսահակյան

Թեմա - ՆԶՊ առարկայի դերը և նշանակությունը հայրենասիրության դաստիրակման գործում

2022թ.

Նախաբան

<<Ռազմագիտություն>> առարկան ընդգրկում է մի շարք ինքնուրույն, իրարից անկախ բաժիններ՝ ռազմահայրենասիրական և օրենսդրական հարցեր, հազորային կանոնադրություններ, մարտավարության հիմունքներ, կրակային ու շարային պատրաստություն, ռազմական տեղագրություն, քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի,առաջին բուժօգնություն հիմունքներ:

Այդ բաժինների միասնական, համալիր ուսուցումը կարող է ապահովել ապագա զինվորի լիարժեք նախապատրաստումը: Սակայն պետք է նկատի ունենալ,որ յուրաքանչյուր բաժին ունի առարկայի դասավանդման իր առանձնահատկությունները, պարապմունքների բազմազանությունը՝ տեսական ու գործնական, անհատական ու խմբայի, դասարանական ու դաշտային: Որոշ պարապմունքներ անցկացվում են տղաների ու աղջիկների հետ առանձին առանձին:

Պարապմունքների ձևի ընտրությունը կախված է նաև առարկա ուսումնական բազայից, դպրոցի տեղակայման վայրից՝ քաղաքում թե գյուղական շրջանում, շեֆ զորամասի տեղակայման հեռավորությունից,օրվա և տարվ եղանակից:

Հետևապես, զինղեկը պետք է պատրաստ լինի,ելնելով իրավիճակից,օրվա եղանակից, ուսումնական բազայի հեռավորությունից, ընտրել պարապմունքների անցկացման ամենաարդյունավետ ձևը:

ՆԶՊ-ի դերն ու նշանակությունը

Հայրենիքի պաշտպանությունը պետության կարեվորագույն խնդիրն ու պարտականությունն է:Պետությունը այդ խնդրին իրականացնում է զինված ուժերի միջոցով:Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի օրենքով սահմանված կարգով պարտավոր է ծառայել հայրենիքի զինված ուժերում:

ՀՀ սահմանադրությունում նշվում է<<Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը>>: <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքում ամրագրված է նախազորակոչային տարիքի պատանիների նախնական զինվորական պատրաստության անցկացումը. Այդ խնդրի լուծման համար էլ նախատեսված է ուսումնական հաստատություններում << ՆԶՊ>> առարկայի դասավանդումը:

Ավագ դպրոցի յուրաքանչյուր պ ատանի շրջանավարտ պետք է իրեն նախօրոք պատրաստի այս մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի համար,և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված մտավոր ու հոգևոր ներուժով, բարոյական վեհ արժեքներով օժտված անձնավորություն, ունենա անհրաժեշտ ռազմագիտական նվազագույն գիտելիքներ և ունակություններ:

<< Նախնական զինվորական պտրաստություն>> առարկայի կրթական նշանակությունը

Դպրոցներում <<ՆԶՊ>> առարկայի դասավանդումը պատանիներին հնարավորություն է տալիս անհրաժեշտ ռազմական գիտելիքներ ստանալու և ծառայության զորակոչվելիս հեշտությամբ յուրացնելու նորակոչիկների պատրաստության ծրագրին ու դրանք լավագույնս կիրառվելու զինվորական ծառայության ժամանակ:

Նախնական զինվորական պատրաստությունը, կապված լինելով հանրակրթական շատ առարկաների հետ (պատմություն,ֆիզիկա,քիմիա,աշխարհագրություն և այլն) աշակերտների գիտակցության մեջ կարևորում է այդ առարկաների դերը կյանքում և ռազմական գործում,ինչը նպաստում է նրանց բազմակողմանի զարգացմանը;

ՆԶՊ-ի դասավանդման հիմնական սկզբունքները, մանկավարժական պահանջները

ՆԶՊ-ի ուսուցման արդյունավետությունը գաղափարական ուղվածությունը կախված են առարկայի դասավանդման սկզբմունքներից և մանկավարժական պահանջներից: Այդ ակցբբունքներին ու պահանջներն են.

–ազգային լավագույն ավանդությունների պահպանում և խորացում,

-ՆԶՊ-ի զուգակցում միջազգայնորեն ընդունված զինված ընդհարումների և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին,

-հայոց բանակի պատմության և ավանդությունների պահպանման ու զարգացման նպատակաուղվածություն,

-ՆԶՊ-ի դասավանդումը՝ պարզից բարդին անցնելով՝սկզբում վարժաձևերի ճիշտ, բայց դանդաղ կատարմամբ,այնուհետև կանոնադրական պահանջներին համապատասխան,

-ՆԶՊ-ի գիտելիքների կիրառական փորձառության ձեռքբերում հրաձգարաններում և զորամասերում գործնական պարապմունքի ժամանակ,

- դասավանդման մեթոդական բազմազանության՝ ուսումնական զենքի, սարքերի, սարքավորումների, տեսասկավառակների,պաստառների առավելագույն օգտագործմամբ,

-ՆԶՊ-ի միջառարկայական կապերի օգտագործում:

Ուսուցումը կազմակերպվում է ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներով, սովորողը հնարավորությու ոնի արտահայտելու իր խոսքն ու կարծիքը, ստեղծագործելու, դրսևորելու իր գիտելիքներն ու ունակությունները երկխոսության, տարբեր վարժությունների միջոցով:

ՆԶՊ-ի հիմնական խնդիրները

Ուսումնական հաստատությունում ՆԶՊ-ի հիմնական խնդիրներն են.

. ապահովել սովորողների կողմից <<Նախնական զինվորական պատրաստություն>>

առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

. սովորողների գիտակցությանը հասցնել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի խնդիրները, առանձնահատկություններն ու նշանակությունը,

. սովորողների մեջ դաստիրակել ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության զգացումը,

. կազմակերպել զինվորական երդմա ու համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրում և սովորողների մեջ դաստիրակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստականություն,

. պատանիներին ծանոթացնել զորամասերում զինծառայողների կյանքին ու կենցաղին, զենքին ու զինտեխնիկային,

. գործնական պատրաստության միջոցով սովորողներին տալ շարային ու կրակային պատրաստության սկզբնական ունակուտթյուններ,

. սովորողներին զինել անհրաժեշտ ռազմական նվազագույն գիտելիքներով, ապահովել անվտանգ կենսագործունեության և առաջին բուժօգնության հիմունքների յուրացումը, .

դասավանդման ընթացքում սովորողների մեջ ներարկել հայ ռազմարվեսրի պատմական հարուստ փորձը, հայ զինվորին բորոշ մարտական և կամային բարձր հատկանիշներ,

. դաստիրակել հայոց բանակի պատմական ավանդույթներին ծանոթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիներ,

. սովորողների շրջանում իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրություններ ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով,

. ձևավորել պատասխանատու վերաբերմունք և ճիշտ վարքագիծ շրջապատի հանդեպ:

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեթոդական ուղեցույցը նախատեսված է միջնակարգ ուսումնական հաստատությունների և մասնագիտական տեխնիկական ուսումնարանների զինղեկների համար, միաժամանակ կարող է օգտակար լինել մոտոհրաձգային ջոկի հրամանատարներին: Ռազմական կրթության անհրաժեշտությունը բխում է ժամանակակից բոլոր ազգերի կենսական պահանջներից, ուստի մեր առաջնահերթ խնդիրն է՝ ամրապնդել սովորողների ռազմական գիտելիքներն ու կարողությունները, խորապես տիրապետել ժամանակակից զենքին և ռազմարվեստին՝ պատրաստ ամեն րոպե դիմագրավելու թշնամու ոտնձգություններին:

70 տարվա ընդմիջումից հետո կրկին ունենք անկախ Հայրենիք, պետականություն, մարտունակ բանակ,և մեզանից է կախված նրանց հզորացումն ու բարգավաճումը: Զինղեկը ՀՀ զինված ուժերի, Հայրենիքի պաշտպանության մասին թեմաները ներկայացնելիս պետք է հենվի ՀՀ Սահմանադրության և << Զինապատրաստության մասին>> օրենքի վրա:

Հայրենիքը սուրբ և նվիրական արժեք է: Առանց Հայրենիքի վաղ թե ուշ դատապարտված է կորստյան: Ազգը և հայրենիքը լրացնում են միմյանց և ամբողջանում, դա մի համակարգ է, որի բաղկացուցիչ տարրերին են՝ լեզուն,մշակույթը, աշխարհագրական տարացքը, կրոնը և ազգային ավանդույթները:

Զինղեկը, մանկավարժական ողջ կոլեկտիվը պետք է աշակերտների մեջ սերմանեն այն միտքը,որ մեր երկիրը թշնամու ոտնձգություններից պետք է պաշտպանենք ինքներս, որ հայրենիքի անվտանգությունը կախված է առաջին հերթին հենց մեր անձնական մասնակցությունից: Մեջ բերեք Նժդեհի թևավոր խոսքերը. *<< Փոքր ազգերն անպայմանորեն ավելի հայրենասեր պետք է լինեն, քան մեծերը, մենք ավելի՝ քան բոլորը: Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ նրա պակասի շնորհիվ>>:*

Զինղեկը պետք հատուկ ուշադրություն դարձնի պատանիների մեջ սեր դաստիրակելու զենքի՝ որպես հայրենիքի պաշտպանության միակ երաշխիքի նկատմամբ:
Չմոռանանք, որ մեր նախնիները այլևայլ հավատամքների և ավանդույթների հետ մեկտեղ ունեցել է նաև զենքի պաշտամունք, գիտակցելով,ու ազգային արժեքներն կարող են գոյատևել միմիայն զենքի հովանու հերքո: Զենքի փառաբանումը հայ մարդու համար սկսվում է նրա օրորոցայինով և ուղեկցում նրա ողջ կյանքում:
Կարճ ժամանակամիջոցում տիրապետել ժամանակակից զենքին և դառնալ հայրենիքի պաշտպան՝այնքան էլ դյուրին գործ չէ: Հետևաբար, յուրաքանչյուր պատանի պետք է նախօրոք իրեն նախապատրաստի զինվորական ծառայությանը, օժտված լինի ֆիզիկական,մտավոր և հոգևոր ներուժով, լինի բարոյական բարձր արժանիքներ, պատրաստ՝ծառայելու իր ժողովրդին և հայրենիքին:
Ցավով պետք արձանագրել, որ մեր երիտասարդության որոշ մասըն ընկել է զանազան օտարամուտ աղանդների ազդեցության տակ: Դրանում մեղավոր ենք մենք բոլորս: Ուրեմն, ինչ-որ տեղ ճիշտ չենք աշխատել, լիարժեք հաշվի չենք առել արդի երիտասարդության հոգևոր պահանջները,չենք կարողացել ճիշտ դաստիրակել նրանց: Չմոռանանք,որ դաստիրակելն առավել հեշտ է քան վերադաստիրակելը:
Շատ կարևոր է աշխատել աշակերտների ծնողների հետ՝ ապագա զինվորներ դաստիրակելու գործում:
Մերժելի է, երբ ծնողները բռնությամբ տնօրինում են իրենց զավակների անցնելիք ուղին: Անհրաժեշտ է ճիշտ գնահատել պատանիների հակումները, ձգտումները, ընդունակությունները և հարկ եղած դեպքում օգնել՝ ճիշտ կողմնորոշվելու:
Ընտանիքում ծնթոները պետք է լինեն հեղաինակություն, անձնական օրինակով դաստիրակեն իրենց զավակներին, ճիշտ ուղի մատնանշեն նրանց համար: Ոմանք Պատեհ կամ անպատեհ առիթներով, տանը, դրսում սիրում են վերամբարձ խոսել ազգից, հայրենիքից, հայրենասիրությունից,սակայն խուսափում են իրենց զավակներին ուղարկել զինվորական ծառայության:
Ծնողից նման դաստիրակություն ասացած երաիտասարդը, մտնելով բանակ, ստեղծում է յուրատեսակ անբարենպաստ մթնոլորտ, առաջնորդվում<< թայֆա-

յական>> օրենքներով, ինչը երբեմն հասցնում է անցանկալի երևույթների: Նրանք մոռանում են,որ բանակն ունի իր հստակ, պարտադիր օրենքները, որոնց խախտումը ենթակա է դատապարտման:

Անժխտելի փաստ է, որ քաղաքավարի, ազնիվ ու հայրենասեր երիտասարդները կյանք են մտնում այն ընտանիքներից, ուր իշխում են կարգուկանոնը, հարգանքը շրջապատի նկատմամբ, պատվասիրությունը, բարոյականություն ու հայրենասիրությունը

Ընտանիքը հասարակության հետ կկապող օղակը դպրոցն է:

Ի՞նչ է պահանջում ազգային բանակը դպրոցից, ինչպիս՞ի պատվեր է տալիս նրան, ի՞նչ կարողությունների ու իմացությունների տեր երիտասարդներ պետք է համալրեն իր շարքերը:

Ուսումնական ծրագրով ռազմագիտությունը տրվում է 136 ժամ: 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում տղաներն ու աղջիկները պարապում են համատեղ:

10-րդ դասարանում ուսումնական տարվա առաջին կիսամյակում աղջիկներն ու տղաները միասին պարապում են <<Առաջին բուժօգնության հիմունքները>> առարկան՝ 16 ժամ:

10-րդ դասարանում ապրիլ ամսին աղջիկների հետ անցկացվում են երկօրյա հավաքներ բուժական հիմնարկներում կամ ուսումնական հաստատության բուժկետում, իսկ տղաների հետ՝ երկօրյա ռազմադաշտային պարապմունքներ:Այդ պատճառով դասաժամերը 2-րդ կիսամյակում հատկացվում են վերոհիշյալ օրերին դասացուցակով նախատեսված առարկաներին:

Ծրագրի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, հաշվի առնելով 8-րդ, 9-րդ, 10-րդ դասարանների տարեկան ամփոփիչ գնահատականները: Այդ գնահատականների և երկօյա ռազմադաշտային (աղջիկների համար՝ բուժհիմնարկներում) պարապմունքների արդյունքների հիման վրա նշանակվում է ատեստավորման վերջնական գնահատական:

Դպրոցականների նախնական զինվորական պատրաստության (ՆԶՊ) կանոնա-

կարգման փաստաթուղթն է դպրոցի ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանը: Այստեղ ըստ փուլերի պետք է արտացոլվեն գաղափարական, կազ-

մակերպական, մեթոդական և ուսումնադաստիրակչական աշխատանքների հիմնա-կան խնդիրները՝ նշելով դրանց կատարման ժամկետները: Կազմված պլանի համա-ձայն՝ դպրոցի զինղեկը պարտավոր է պահպանել ՆԶՊ ծրագրի անցկացման տրամա-բանական հաջորդականությունը:

Դպրոցի տնօրենը պատասխանատվություն է կրում ռազմագիտության դասավանդ-ման և աշակերտների ռասմահայրենասիրական դաստիրակության կազմակերպման, ինչպես նաև ուսումնական զենքի, փոքր տրամաչափի հրացանների ու փամփուշտ-ների պահպանման համար: *Նա պարտավոր է՝*

. Ժամանակին ապահովել ուսումնական գործընթացի պրանավորումն ու կազմա-կերպումը, ծրագրի լիարժեք և բարձրորակ կատարումը,

. առանձնացնել սենյակներ և հրապարակներ գործնական պարապմունքների համար, կազմակերպել ուսումնական զենքի հաշվառումը, պահպանումը և դուրսգրումը սահմանված կարգով, երեք ամիսը մեկ անձամբ ստուգել զենք-զինամթերքի առկա-յությունը, պահպանումը տեխնիկական վիճակը,

. զինղեկին ցույց տալ ուսումնամեթոդական օգնության,ապահովել <<Ռազմա-գիտություն>> առարկայի կապը հանրակրթական այլ առարկաների հետ,

. կազմակերպել ու անցկացնել <<Կորյուն>> և այլ ռազմամարզական ու ռազմակիրա-ռական խաղեր,

.հրամանով հաստատել ծրագրով նախատեսված 2-օրյա ռազմադասհտային պարա-պմունքները, յամանակը, տեղը և տեղափոխման միջոցները,

. ըստ անհրաժեշտության զինղեկին ուղարկել սեմինարների, վերապատրաստման դասընթացների և այլ միջոցառումների՝ կախված նրա վորակավորման բարձրացման հետ:

Դպրոցի զինղեկը ենթարկվում է դպրոցի տնօրենին, անմիջականորեն պատասխա-նատու է աշակերտների նախնական զինվորական պատրաստության, հաշվեցու-

ցակային զենքի, փոքր տրամաչափի հրացանների ու փամփուշտների պահպանման և հանձման համար: Զենքով, մարտական տեխնիկայով ու զինամթերքով պարապմունքների ժամանակ պետք խստորեն պահպանի անվտանգության սահմանված նորմերն ու կանոնները:

Նա պետք է հատուկ ուշադրություն դարձնի մանկավարժական տակտի պահպանման վրա: Զսպող, սառը, անբարյացկամ տոնը ընդունելի չէ: Զինղեկը մանկավարժական բարձր պահանջկոտությունը պետք է համատեղի աշակերտների նկատմամբ հոգատարության և հարգանքի, օբյեկտիվության և արդարության հետ: Նա պետք է իր գործելակերպի և իրավունքների հանդեպ համակված լինի մեծ պատասխանատվությամբ:

Զինղեկը պարտավոր է՝

. Որպես ուսուցիչ տիրապետել մանկավարժության, հոգեբանության տեսությունների, համազորային պատրաստության մեթոդիկային, ինչպես նաև ունենալ ուսումնադաստիրակչական աշխատանքների կազմակերպման և անցկացման ունակություն,

. մշտապես զբաղվել ինքնակրթությամբ,լինել ժամանակի պահանջներին համահունչ, պարբերաբար մասնակցել վերապատրաստման դասընթացներին, խորհրդակցություններին, ուր անց են կացվում ՆԶՊ-ը վերաբերող քննարկումներ, դասավանդման մեթոդիկայի առնչվող հարցեր և այլն,

.տնօրինել ռազմագիտության կաբինետը, զենք-զինամթերքի պահպանման սենյակը, հրաձգարանը, ստեղծել և բարելավել ՆԶՊ ուսումնանյութական բազան,

. հաշվառել հաշվեցուցակային ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացաններն ու փամփուշտները, խնամել և պահպանության հանձնել սահմանված պահանջներին խիստ համապատասխան. ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ ստուգել դրանց առկայությունն ու տեխնիկական վիճակը,

. դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ կազմակերպել աշակերտ-

ների ռազմահայրենասիրական դաստիրակության աշխատանքներ, այդ թվում ստանձնել ուսումնամարզական << Կոյրուն>> միջոցառման մեթոդական ղեկավարությունը,

. մասնակցել մարզային (քաղաքային) հրաձգության ռազմակիրառական մարզձևերի

ու քաղաքացիական պաշտպանության մրցումներին,

.օգնել զինվորական կոմիսարիատներին՝ ընտրելու և նախապատրաստելու զինվորական ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու ցանկություն ունեցող առաջավոր աշակերտների, դասղեկի հետ համատեղ պատրաստել և ստորագրել նախազորակոչիկների բնութագրերը:

Զինղեկը սերտորեն համագործակցում է դպրոցի ուսմասվարի, ֆիզկուլտուրայի ուսուցչի, դասղեկների ու մանկավարժական կոլեկտիվի հետ:

Դպրոցի ՆԶՊ-ն ուսունամեթոդական բազան ընդգրկում է ռազմագիտությոան կաբինետը,ուսումնական զենքը, հրաձգարանը, մարտավարական , շարային պատրաստության և քաղպաշտպանության հրապարակները, ինչպես նաև ուսունական զենքի մաքրման ու յուղման հարթակը, ուսունացուցադրական ձեռնարկները և ուսուցման տեխնիկական միջոցները:

Պատշաճ կերպով պետք է ներկայացնել նաև քաղաքացիական պաշտպանության սարքավորուները: Ցուցատախտակները, վահանակները, ֆոտոպլակատները պետք է ցուցադրեն երկրի քաղաքացիական պաշտպանության կազմակերպման խնդիրները, զանգվածային խոցման (ոչընչացման) զենքերիմարտական հատկությունները, ճառագայթային ու քիմիական հետախուզության և վերահսկողության սարքերի օգտագործման կարգը, բնական աղետների և արտակարգ վիճակների կանխարգելման, վիրավորների ինքնօգնության և փոխօգնության կանոնները:

Դասարանում պետք է լինեն նաև հակագազեր, համազորային պաշտպանության լրակազմեր և այլ ուսումնական գույք ու ունեցվածք (ուսումնական տեղագրական քարտեզներ, քանոններ և այլն):

Զինղեկի նախաձեռնությամբ և աշակերտների աջակցությամբ ռազմագիտության

կաբինետներում կարելի է տեղադրել 2x2մx15 սմ չափսի արկղ՝մեջը լցնել ջրում լուծված տեխնիկական գլիցիրինով թրջված ավազ: Այդ ավազով հնարավոր է ստեղծել կտրտված ռելիեֆ, տեղադրել տեղի առարկաներ, բնակավայրեր, աշակերտներ,կամուրջներ և այլն: Ջրային ցանցը կարելի է պատկերել կապտավուն ապակիներով, անտառները, այգիները,մարգագետինները՝ կանաչ ներկված տաշեղներով կամ թեփով, ինժեներական արգելափակոցների համար օգտագործել բարակ լարեր և գնդասեղներ, ռազմական տեխնիկայի համար՝ մանրակերտեր: Նման մարտավարական ֆոնի վրա անց են կացվում մարտավարության, կրակային պատրաստության, ռազմական տեղագրության պարապմունքներ, շարժական խաղեր, ցուցադրվում են ջոկի դաստակի գործողությունները, կատարվում մարտական առաջադրանքներ, վերլուծություն և այլն:

Հանրակրթական դպրոցներում ռազմագիտության ուսուցումը կատարվում է մի շարք փոխկապակցված ձևերով և մեթոդներով: Ուսուցման ընթացքում աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ ունակություններ, զարգացնում իրենց ռազմագիտական հմտությունները:

Դաստիրակությունը անհատին ձևավորման նպատակասլաց, համակարգված գործընթաց է՝ հասարակական և զինվորական կյանքի նախապատրաստմանաը ակտիվորեն մասնակցելու կարևոր պայման:Աճող սերնդի դաստիրակությունն իրականացվում է ընտանիքի և ուսումնական հաստատությունների համակարգի համատեղ գործունեության ընթացքում և սերտորեն առնչվում է ուսուցման հետ: Ուսումնադաստիրակչական հաստատություններից կարևևորագույնը դպրոցն է, որտեղ աշակերտ՝ ապագա զինվորը, պետք է ձևավորվի որպես համակողմանի զարգացած անձնավորություն, ներդաշնակորեն համակցելով հոգևոր և գեղագիտական հարստությունը, բարոյական մաքրությունը, ռազմական իմացությունը և ֆիզիկական կատարելությունը:

Ռազմահայրենասիրական դաստիրակության թեմաները պետք է վերաբերեն հայ ժողովրդին և Հայաստանին, նրա ազգային ազատագրական պայքարին, քաղաքական ու

կրոնական գործիչներին, հայոց արքաներին զորավարներին և ֆիդայիներին Առաջին համաշխարային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած անասելի տառապանքներին, Առաջին Հանրապետության ստեղծմանը, Երկրորդ համաշխարային պատերազմի և Արցախի ազատամարտի ռազմիկներին:
ևվ եթե աշակերտը ինքնուրույն որոշի կարդալ այնպիսի պատմավեպեր, ինչպիսիք են<<Սամվելը>>, <<Կայծերը>>, (Ռաֆֆի), <<Վարդանանքը>> (Դ. Դեմրճյան), <<Պապ Թագավորը>>(Ստ.Զորյան),<<Գևորգ Մարզպետունին>> (Մուրացան),<<Մխիթար Սպրապետը>> (Ս. Խանազադյան),<<Խոդեդանը>>(Խ.Դաշտենց),<<Մուսա լեռան 40 օրը>> (Ֆ Վերֆել)և շատ ու շատ այլ գործեր, ապա դա կլինի ոչ միայն զինղեկի, այլ գրականության ու պատմության ուսուցիչների մեծագույն նվաճումը,արժեքավոր ավանդը:
Ռազմաքաղաքական տիպի նման գրքերի դրական հերոսների օրինակների վրա ձևավորվում են երիտասարդների բարոյական,կամային հատկանիշները, հաստատվում է յուրովի կապ անցիալի ու ներկայի միջև,հպարտության զգացումով համակում մեր մեծ նախնիների հանդեպ:
Ռազմահայրենասիրական թեմաներում, անշուշտ, պետք կարևորվեն մեր հաղթանակներն ու պարտություններն, բայց և իրատեսությամբ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ազգային թերությունները՝ աճող սերնդին բացատրելու համար դրա կործանարար հետևանքները:
Ռազմահայրենասիրական թեմատիկայի նյութ կարող են հանդիսանալ նաև զրույցները, դասախոսությունները, զինվորական երդման,մարտական պատրաստության, ռազմագիտական մասնագիտությունների մասին անցկացված դասաժամերը:Այսպես.
1.Ավագ սերնդի հերոսական սխրագործությունները օրինակ են երիտասարդության համար:
2.Երիտասարդության մարտական սխրագործությունները Արցախյան գոյամարտում:
3.Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտի պատմական նշանակությունը:

4. Հայ հերոսների և նրանց քաջագործությունների գեղարվեստական գրականության մեջ:
5. 1915թ. Վան ինքնապաշտպանական կռիվները:
6. Խոշաբի և Ավարայրի ճակատամարտերը որպես հայ ազգի հարատևության վկայություն:
Նախատեսված թենաների նպատակը պետք է լինի ամրապնդել գիտելիքները Հայաստան աշխարհի, հայ ազգի մասին, հակիրճ տեղեկություններ տալ քիստոնեության և հավատքի, ազգապահպանմյուս գործոնների վերաբերյալ և այլն:

Ռազմահայրենասիրական դաստիրակության ասպարեզում մեծ դեր են խաղում նաև վաղօրոք պատրաստված և իմաստավորված հանդիպումներ և փոխադարձ կապը պատերազմի վետերանների, Արցախյան ազատամարտի հերոսների և ՀՀ զորամասերի հետ:
Գործնականում նշված մեթոդները կիրառվում են զուգակցված և առանձին տարբերակներով՝ դասընթացների, զրույցների և ուսուցման այլ ձևերով:
Ուսուցման և դաստիրակության հետ սերտորեն առնչվում է աշակերտներ հոգեբանական պատրաստություն: Սա պայմաններից մեկն է, որի օգնությամբ ձևավորվում են մարտական որակները՝ մտածելակերպ, կամք, զգոնություն, հպարտություն իր հայրենիքի հկատմամբ նայլն:
Վերջին տարիներին դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիրակության գործուն միջոցառումներից մեկն է <<Կոյրուն>> ռազմակիրառական և ռազմամարտական բնույթ կրող մարզական խաղերի անցկացումը: Բնականաբար, նման միջոցառումները պետք մանրազնին նախապատրաստել, հապճեպությունը ոչինչ չի տա և նպատակին չի ծառայի:
Սկզբում հպատակահարմար է անցկացնել միջդասարանական մրցումներ,ապա ավելի մեծ մասշտաբներով՝ միջդպրոցական (քաղաքային, մարզային և այլն):
Ցանկալի է նման մեծամաշտաբ, մասսայական խաղերի բացումը կատարել հանդիսավոր պայմաններում, նվագախմբի մասնակցությամբ:Որպես պատվավոր հյուրեր

կարելի է հրավիրել դպրոցի տնօրենին, ՀՀ պաշտպանության և ներքին գործերի

նախարարությունների ածխատակիցների ու սպաների, համայնքների ավագ զինողեկների, Հայրենական պատերազմի և Արցախյան ազատամարտի մասնակիցների, զինկոմիսարյանտների սպաների, ֆիզկուլտուրայի ուսուցիչների և ուրշների:

Նման միջոցառումները դպրոցականների գաղափարաքաղաքական,բարոյահոգեբանական բազմակողմանի դաստիարակության և սկզբնական և ռազմական իմացությունների գործնական ստուգման ու ամրապնդման լավագույն միջոցն է:

Եզրակացություն

Հանրակրթական ոլորտի բարեփոխումներն ուղղված են կրթության որակի ապա-հովմանը: Առավել կարևոր է այդ խնդրի ճիշտ կատարումը ավագ դպրոցում, որը <<նախամասնագիտական>> կրթությունն ապահովող հիմնական օղակն է:
Մեր տարածաշրջանում տիրոց բարդ, պայթունավտանգ վիճակը, հարակից երկրներից ոմանց թշնամական, ագրեսիվ նկրտումները մեր հանդեպ և եվրոպական միության ձգտումը մեր երկիրը ընդգրկելու իրենց պատասղանատվության ոլորտ, առանց հաստատուն երաշխիքի ապահովոլու մեր անվտանգությունը (չմոռանանք 1918-1920թթ.,ներկա շրջափակումը) պարտադրում են հայ ժողովրդին մշտապես մտածել երկրի անվտանգության ապահովման մասին, ունենալ մարտունակ և հզոր բանակ, որն ունակ լինի լուծելու հայրենիքի պաշտպանության խնդիրները:
Այդ խնդիրների լուծման մեջ իր հաստատուն ու կարևորագույն տեղն ունի <<Նախնական զինվորական պատրաստության>> (այսուհետ՝ՆԶՊ) առարկայի դասավանդումը դպրոցներում, վարժարաններում, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:<< Զինապարտության մասին>> ՀՀ օրենքում ամրագրված է, որ նախազորակոչային տարիքի Հայաստանի քաղաքացիները ուսումնական հաստատություններում անցնում են <<ՆԶՊ>> (հոդված 8): Հետևապես ավագ դպրոցում բոլոր սովորողների համար, անկախ ընտրախշծ մասնագիտական հոսքից, <<ՆԶՊ>>-ն պարտադիր առարկա է:
<<Նախնական զինվորական պատրաստություն>> առարկայի ու ռազմահայրենասիրական դաստիրակության նպատակն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու ունակ , բազմակողմանի զարգացաց պատանիներ ու աղջիկներ հնարավորություն ընձեռել պատանիներին բանակ զորակոչելուց հետո կարճ ժամանակում տիրապետելու ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային:
Ծրագրի առաջին բաժինները, լինելով իրարից բավականին անկախ, ուսուցման ընթացքում թույլ են տալիս կատարել թեմաների ուսուցման հերթականության փոփոխություններ՝ կախված տվյալ դպրոցի ուսումնական բազայի վիճակից, դպրոցի տեղակայման վայրից՝ քաղաքում, թե գյուղում, լեռնային, թե հարթավայրային շրջանում,

շեֆ զորամասի հեռավորությունից , օրվա և տարվա եղանակից:

<<ՆԶՊ>> առարկայի բայինները, ուսուցման վերջնական արդյունքում սուվորողների մեջ ձ ևավորվում են ապագա զինվորի համար անհրաժեշտ ռազմագիտական նվազագույն գիտելիքներ, բարոյահոգեբանական հատկանիշներ, կամային հատկություններ, հայրենիքին ծառայելու հատկություն: Նշված արժեքային համակարգի ձևավորման համար յուրաքանչյուր թեմայում նշված են կրթական հիմնական խնդիրները (նպատակը) սովորողների համար ակնկալվող գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Առարկայի խնդիրները լուծելու համար օգտագործում են ուսումնական գործունեության բոլոր տեսակները՝ ուսումնական նյութի բացատրում,ցուցադրում, պատրաստում տեղանքի ուսումնասիրում, նկարների, ուսումնական ֆիլմերի ցուցադրում, դիտում, քննարկում, չափողական, գործնական աշխատանքներ տեղանքում, ուսումնական զենքի,նռնակների, ականների օգտագործում,շարային վարժաձևերի կատարում, բաժնեչափական, քիմիական,հետախուզական սարքերի ցուցադրում, կողմնացույցներով և տեղագրականքարտեզներով խնդիրների լուծում,գրավոր աշխատանքների կատարում, գլխավոր և բանավոր հարցումներ, ստուգարքի անցկացում, համակարգչային, օգտագործում, անհատական և խմբային ջոկի կազմով պարապմունքների և աշխատանքների կատարում:

Գրականության ցանկ

1. ՆԶՊ-ի դերն ու նշանակությունը, ՆԶՊ առարկայի կրթական նշանակությունը
2. ՆԶՊ-ի դասավանդման հիմնական սկզբունքները մանկավարժկան պահանջներ ՆԶՊ-ի հիմնական խնդիրները
3. ՀՀ Զինված ուժեր և ռազմահայրենասիրական դաստիրակություն
4. Գրականություն ուսուցչի մեթոդական ձեռնարկ